ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ -ԱՄՇ-22/1.1»

ք.Երևան «20» 01 2022թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս կոմիտեի **գլխավոր քարտուղար Ա. Նիկոյանի** (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Խլղաթյան Շին» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն Մ. Խլղաթյանի, որը գործում է **«Խլղաթյան Շին» ՍՊԸ-ի** կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի քննչական վարչության վարչական շենքի վերանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **20.09.2022թ:**

աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օր**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **60 840 000 (վաթսուն միլիոն ութ հարյուր քառասուն հազար)** ՀՀ դրամ, որից **10 140 000 (տաս միլիոն հարյուր քառասուն հազար)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3

(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[32]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է _6_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ քննչական կոմիտե	**«Խլղաթյան Շին» ՍՊԸ**
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5	**ՀՀ Արմավիրի մարզ ք. Արմավիր,**
ՀՀ ՖՆ աշխատակազմի	**Թումանյան փ. 82**
գործառնական վարչություն,	**< ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ> ՓԲԸ**
Հ/Հ 900011019776	**Արմավիր մ/ճ**
ՀՎՀՀ 02631263	**Հ/Հ 220033332226000**
Գլխավոր քարտուղար՝ Ա. Նիկոյան	**ՀՎՀՀ 04422512**
	Տնօրեն՝ Ս. Խլղաթյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«20» 01 2022թ. կնքված
ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ -ԱՄՇ-22/1.1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՐՄԱՎԻՐԻ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀՀ հազ. դրամ

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավ. գինը	Գումարը
1	3	4	5	6	7
	1. Շինարարական աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
1	Դեմոնտաժվող պատեր և նոր բացվածքի իրականացում 1-ին և 2-րդ հարկերում	մ³	32.2	5.00	160.87
2	Դռան բլոկի ապամոնտաժում	մ²	58.20	1.50	87.30
3	Պատուհանների ապամոնտաժում	մ²	85.52	1.00	85.52
4	Պատերից և շեպերից հին սվաղի մաքրում	մ²	1617.6	0.20	323.52
5	Պատերից կերամիկական սալերի քանդում	մ²	74.25	0.20	14.85
6	Կերամիկական հատակի քանդում	մ²	10.50	0.50	5.25
7	Մանրատախտակե հատակների քանդում	մ²	397.30	0.20	79.46
8	Ճակատներից հին երեսաքարի քանդում	մ³	3.40	9.00	30.60
9	Հավաքովի ե/բ աստիճանների քանդում	մ	10.20	2.00	20.40
10	Տանիքի ապամոնտաժում	մ²	534.20	0.40	213.68
11	Շին աղբի տեղափոխում շենքից դուրս	տ	185.0	1.50	277.50
12	Առաջացած շին. աղբի բարձում, տեղափոխում 3կմ հեռ.վրա	տ	185.0	2.00	370.00
	Ներքին հարդարման աշխատանքներ				
	1-ին հարկ				
1	Նոր կառուցվող պատերի h=100մմ հաստ պեմզաբլոկով	մ²	55.5	2.00	111.00
2	Պատերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ²	934.96	1.80	1682.93
3	Պատերի ծեփամածկում և լատեքսային ներկում	մ²	860.71	1.80	1549.28
4	Պատերի երեսապատում լավորակ հախճասալով	մ²	74.25	8.00	594.00

5	Պլաստիկե առասաղի իրականացում, մետաղական պրոֆիլի վրա	մ²	12.62	6.00	75.72
6	Գիպսաստվարաթղթե առասաղի իրականացում, մետաղական պրոֆիլի վրա	մ²	315.65	4.00	1262.60
7	Մետաղապլաստե, դուռ (արտերկիր-պրոֆիլ)	մ²	10.71	53.00	567.63
8	Լամինատե դուռ	մ²	1.89	75.00	141.75
9	Մետաղական դուռ	մ²	1.89	85.00	160.65
10	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր), բացվող	մ²	49.89	43.00	2145.27
	Հատակներ 1-ին հարկ				0.00
1	Ջերմամեկուսիչ շերտ h=30մմ Հ-1	մ³	5.44	40.00	217.40
2	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտ Հ-1	մ²	181.17	2.00	362.34
3	Լամինատե ծածկույթի իրականացում 8մմ հաստությամբ ներառյալ պարալոնի շերտը	մ²	181.17	6.00	1087.02
4	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտ Հ-2	մ²	134.48	2.00	268.96
5	Կերամոգրանիտե սալիկների իրականացում, ամրացված սոսնձով Հ-2	մ²	134.48	12.00	1613.76
6	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտ Հ-3	մ²	12.62	2.00	25.24
7	Կերամիկական սալիկների իրականացում, ամրացված սոսնձով Հ-32	մ²	12.62	12.00	151.44
	Արտաքին հարդարում				0.00
1	Պատուհանագոգերի տեղադրում 300մմ կտրվածքով մետաղական թաղանթով	մ²	9.87	10.00	98.70
2	Շեպերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ²	62.24	3.00	186.72
3	Դռների և պատուհանների շեպերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ²	14.28	3.00	42.84
	2-րդ հարկ				0.00
1	Նոր կառուցվող պատ պեմզաբլոկով-20սմ	մ³	2.4	35.00	84.00
2	Նոր կառուցվող պատերի h=100մմ հաստ պեմզաբլոկով	մ²	15.2	8.00	121.68
3	Պատերի բարձրորակ սվաղում	մ²	682.64	1.80	1228.75

	ցեմ/ավազային սվաղով				
4	Պատերի ծեփամածկում և լատեքսային ներկում	մ²	564.13	2.00	1128.26
5	Պատերի երեսապատում լավորակ հախճասալով	մ²	118.51	8.00	948.08
6	Պլաստիկե առասաղի իրականացում, մետաղական պրոֆիլի վրա	մ²	17.51	4.00	70.04
7	Գիպսաստվարաթղթե առասաղի իրականացում, մետաղական պրոֆիլի վրա	մ²	181.21	3.50	634.24
8	Լամինատե դուռ	մ²	15.12	45.00	680.40
9	Մետաղապլաստե, դուռ (արտերկիր-պրոֆիլ)	մ²	5.88	53.00	311.64
10	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր), բացվող	մ²	38.62	40.00	1544.80
	Հատակներ 2-րդ հարկ				0.00
1	Ջերմամեկուսիչ շերտ h=30մմ Հ-1	մ³	4.12	45.00	185.27
2	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտ Հ-1	մ²	137.24	2.00	274.48
3	Լամինատե ծածկույթի իրականացում 8մմ հաստությամբ ներառյալ պարալոնի շերտը	մ²	137.24	6.00	823.44
4	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտ Հ-2	մ²	43.97	2.00	87.94
5	Կերամոգրանիտե սալիկների իրականացում, ամրացված սոսնձով Հ-2	մ²	43.97	10.00	439.70
6	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտ Հ-3	մ²	9.77	2.00	19.54
7	Կերամիկական սալիկների իրականացում, ամրացված սոսնձով Հ-32	մ²	9.77	10.00	97.70
8	Պլաստմասե շրիշակների իրականացում h=6սմ	մ	306.1	1.00	306.10
9	Կերամոգրանիտե շրիշակների կառուցում ամրացված սոսնձով h=8սմ	մ²	11.50	10.00	115.00
	Արտաքին հարդարում				0.00
1	Պատուհանագոգերի տեղադրում 300մմ կտրվածքով մետաղական թաղանթով	մ²	5.55	10.00	55.50
2	Շեպերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ²	42.24	3.00	126.72

3	Դռների և պատուհանների շեպերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ²	9.18	3.00	27.54
	Տանիքի մասնակի վերանորոգում				0.00
1	Տանիքի փայտե տարրերի պատրաստում և տեղադրում (մասնակի վերանորոգում)	մ³	15.24	150.00	2286.00
2	Փայտյա տարրերի հրապաշտպանություն	մ³	15.24	8.00	121.92
3	Տանիքի իրականացում 0,5մմ հաստությամբ պրոֆիլավոր թիթեղից KP21	մ²	542.90	7.00	3800.30
4	Քիվի իրականացում ներկված թիթեղից	մ²	36.61	7.00	256.27
5	Տանիքի ճոռի իրականացում	մ²	42.50	7.00	297.50
6	Ջրատար խողովակ 100x100	մ	115.60	3.00	346.80
7	Տանիքի ջերմամեկուսացում կարմիր խարամով 50սմ հաստ	մ³	22.8	5.00	114.00
8	Մետաղական տարրերի իրականացում	տ	0.076	900.00	68.30
9	Ցինկապատ թիթեղով թասակի իրկանացում 0,7մմ հաստ	մ²	6.60	10.00	66.00
10	Օդատարի բետոնացում B15 դասի բետոնեվ	մ³	1.40	45.00	63.00
11	Տանիքի պատուհանի իրականացում	հատ	1	55.00	55.00
12	Ցինկապատ թիթեղ տանիքի պատուհանների համար 0,7մմ	մ²	6.20	10.00	62.00
	Ներքին աստիճանավանդակ				0.00
1	Ե/բ գոտիու կառուցում B15 դասի բետոնով	մ³	0.72	55.00	39.60
2	Ամրան Ac I	տ	0.014	400.00	5.62
3	Ամրան A500c	տ	0.038	400.00	15.34
4	Աստիճանավանդակի հարթակի և թեքահանթակի կառուցում B15 դասի բետոնով	մ³	2.6	80.00	204.80
5	Ամրան Ac I	տ	0.005	400.00	2.11
6	Ամրան A500c	տ	0.080	400.00	31.92
7	Աստիճանների երեսապատում բազալտե սալաիկներով 30մմ	մ²	13.40	12.00	160.80
8	Մետաղական խողովակներով բազրիքների իրականացում	տ	0.12	900.00	103.82
	Նախամուտք և արտաքին աստիճաններ				0.00
1	Խճային շերտի իրականացում	մ³	0.01	12.00	0.10
2	Կետային հիմքերի իրականացում	մ³	0.15	45.00	6.75

	B15 դասի բետոնից				
3	Ամրան A500c	տ	0.068	400.00	27.08
4	Ամրան Ac I	տ	0.004	400.00	1.40
5	Ներդիր տարրեր	տ	0.013	700.00	9.39
6	Խճային շերտի իրականացում	մ³	0.52	12.00	6.24
7	Նախամուտքի խամքարաբետոնի իրականացում B7,5 դասի բետոնով	մ³	4.5	40.00	180.00
8	Նախամուտքի հիմքերի իրականացում B15 դասի բետոնով	մ³	1.200	55.00	66.00
9	Ամրան Ac I	տ	0.020	400.00	7.99
10	Ամրան A500c	տ	0.053	400.00	21.31
11	Նախամուտքի ե/բ գոտի ծածկի մակարդակում B15 դասի բետոնով	մ³	0.9	45.00	40.50
12	Ամրան Ac I	տ	0.017	400.00	6.60
13	Ամրան A500c	տ	0.053	400.00	21.31
14	Նախամուտքի երեսապատում բազալտե սալահիկներով 20մմ հաստ	մ²	22.73	10.00	227.30
15	Բետոն B15 դասի բետոնով	մ³	3.0	40.00	120.40
16	Խճային շերտի իրականացում	մ³	0.36	12.00	4.32
17	Կողային մուտքի աստիճանների երեսապատում բազալտե սալահիկներով 30մմ	մ²	30.28	10.00	302.80
18	Բետոն B15 դասի բետոնով	մ³	3.2	45.00	144.00
19	Մետաղական խողովակներով բազրիքների իրականացում	տ	0.33	800.00	263.94
	Ծածկարան				0.00
1	Մետաղական տարերի իրականացում	տ	0.076	700.00	53.12
2	Ծածկարանի տանիքի իրականացում 0,55մմ հաստությամբ պրոֆիլավոր թիթեղից KP25	մ²	22.31	7.00	156.17
3	Ջրատար խողովակ 100x100	մ	3.15	5.00	15.75
4	Ծածկարանի երեսապատում ալյումաբոնդով ներդրյալ մետաղական պրոֆիլները	մ²	11.2	23.00	257.60
5	Պլաստիկե առասաղի իրականացում, մետաղական պրոֆիլի վրա	մ²	22.30	6.00	133.80
6	Մետաղական կանգնակների իրականացում դռների բացվածքներում	տ	0.195	700.00	136.35
7	Ամրան A500c	տ	0.015	400.00	5.85
8	Մետաղական ցանց ռաբիցա	մ²	4.800	3.00	14.40

9	Միջնաձողերում բետոնի իրականացում B15 դասի	մ³	0.78	45.00	35.10
10	Ամրան Ac I	տ	0.017	400.00	6.82
11	Ամրան A500c	տ	0.030	400.00	12.13
12	Մետաղական կանգնակների և հեծանների իրականացում, ՄԿ-1, ՄՀ-1, ՄՀ-2	տ	0.248	700.00	173.42
13	Պատերի ամրանավորման ցանց ամրան Ac I	տ	0.027	600.00	16.13
14	Մետաղական ֆերմաների ՄՖ-1	տ	0.56	700.00	390.98
	Սալվածք				0.00
1	Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ	մ	108.3	10.00	1083.00
2	Մայթի սալահիկների իրականացում	մ²	86.64	9.00	779.76
3	Բետոն B15 դասի բետոնով	մ³	7.3	40.00	292.00
4	Խճի շերտի իրականացում	մ³	4.5	8.00	36.00
	Ընդամենը				**36481.9**
	2. Ներքին սառը տաք ջրամատակարարում				
1	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում PPR Φ50x6,9 PN20 փորձարկումով	մ	4.0	6.00	24.00
2	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում PPR Φ32x4,4 PN20 փորձարկումով	մ	6.0	5.00	30.00
3	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում PPR Φ25x3,5 PN20 փորձարկումով	մ	45.0	4.00	180.00
4	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում PPR Φ20x2,8 PN20 փորձարկումով	մ	40.0	3.00	120.00
5	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում PPR Φ16x2,0 PN20 փորձարկումով	մ	10.0	3.00	30.00
6	Գնդային փական Φ50, մոնտաժումով	հատ	1	7.00	7.00
7	Գնդային փական Φ32, մոնտաժումով	հատ	1	6.00	6.00
8	Գնդային փական Φ25, մոնտաժումով	հատ	9	5.00	45.00
9	Գնդային փական Φ20, մոնտաժումով	հատ	2	5.00	10.00
10	Անկյունային փական Φ15, մոնտաժումով	հատ	20	6.00	120.00
11	Կցորդիչ պոլիպ. և պողպատե խողովակների միացման համար	հատ	1	9.00	9.00

	Φ50				
12	Ճկուն խողովակ սանիտարական սարքերի միացման համար Φ15, L=0,6մ	հատ	20	2.00	40.00
13	Ջերմամեկուսացում ռետինե խողովակներ 9մմ հաստ- de50 խողովակի համար	մ	4.0	2.00	8.00
14	Ջերմամեկուսացում ռետինե խողովակներ 9մմ հաստ- de32 խողովակի համար	մ	6.0	1.00	6.00
15	Ջերմամեկուսացում ռետինե խողովակներ 9մմ հաստ- de25 խողովակի համար	մ	45.0	1.00	45.00
16	Ջերմամեկուսացում ռետինե խողովակներ 9մմ հաստ- de20 խողովակի համար	մ	40.0	1.00	40.00
17	Ջերմամեկուսացում ռետինե խողովակներ 9մմ հաստ- de16 խողովակի համար	մ	10.0	1.00	10.00
18	Պողպատե էլեռակցվող խողովակ DN57x3մմ մոնտաժումով, փորձարկումով	մ	15.0	4.00	60.00
19	Պողպատե DN50 խողովակների ձևավոր մասեր -7հատ	կգ	5.6	2.00	11.20
20	Հակահրդեհային արկղ, տեղադրումով	կոմպլ.	2	20.00	40.00
	ա. Հակահրդեհային արկղ, 814x814x192	հատ	2	35.00	70.00
	բ. Հակահրդեհային ծորակ, DN50	հատ	2	10.00	20.00
	գ. Հակահրդեհային ռետինե խողովակ երկկողմանի արագ կցվող կիսամանեկներով, Φ50, L=20մ,	մ	40.0	3.00	120.00
	դ. Բրանցպոյտ, Φ16	հատ	2	8.00	16.00
	ե. Ձեռքի փրփրային կրակմարիչ	հատ	2	22.00	44.00
21	Մետաղական տարրերի երկշերտ ներկում	$մ^2$	0.1	2.00	0.10
22	Համակարգի լվացում և ախտահանում	մ	120.0	0.10	11.94
	Ընդամենը				**1123.2**
	3. Կենցաղային կոյուղի				
1	Զուգարանակոնք հատակին տեղադրվող լվացման բաքով	կ-տ	6	33.00	198.00
2	Լվացարան կերամիկական 550x450մմ խառնիչով	կ-տ	6	20.00	120.00
3	Լոգախցիկ խառնիչով և	կոմպլ	1	70.00	70.00

	ամրացման պարագաներով				
4	Պոլիվինիքլորիդե կոյուղու խողովակների տեղադրում Φ=110, ռետինե սեղմիչ օղակներով փորձարկումով	մ	32.0	2.00	64.00
5	Պոլիվինիքլորիդե կոյուղու խողովակների տեղադրում Φ=50, ռետինե սեղմիչ օղակներով փորձարկումով	մ	10.0	1.00	10.00
6	Պոլիվինիքլորիդե խողովակների ձևավոր մասեր d=110մմ	հատ	34	0.50	17.00
7	Պոլիվինիքլորիդե խողովակների ձևավոր մասեր d=50մմ	հատ	15	0.50	7.50
8	Ստուգիչ d=110մմ	հատ	4	2.00	8.00
9	Մետաղական խողովակ DN300, L=0,3մ կոյուղու օդափոխության խողովակի ելք տանիքից -2տեղ	մ	0.6	4.00	2.40
	Ընդամենը				**496.9**
	4. Ջեռուցում				
1	Կոնդենսացիոն տուրբո գազի կաթսա 35ԿՎտ	կ-տ	1	800.00	800.00
2	Կոնդենսացիոն տուրբո գազի կաթսա 28ԿՎտ	կ-տ	1	650.00	650.00
3	Ծխատար խողովակ	հատ	2	9.00	18.00
4	Շրջանառու պոմպ G=1,7մ3/ժ, H=7մ	կ-տ	1	100.00	100.00
5	Գնդային փական 3/4 տեղադրումով	հատ	4	8.00	32.00
6	Գնդային փական 1/2 տեղադրումով	հատ	4	5.00	20.00
7	Ջրի ցանցավոր զտիչ 3/4	հատ	2	8.00	16.00
8	Պոլիպրոպիլենե խողովակների ձևավոր մասեր Φ15-Φ25	հատ	6	0.40	2.40
9	Կաթսայի կախիչ	հատ	2	2.00	4.00
10	Ալյումինե մարտկոց 1 սեկցիան 130վատ, H=0,5մ 338 սեկցիա	էքմ	94.6	0.70	66.25
11	Ալյումինե լավորակ մարտկոցի արժեքը	սեկցիա	338.0	5.50	1859.00
12	Ջեռուցման մարտկոցի կոմպլեկտ	հատ	35	3.00	105.00
13	Ջեռուցման մարտկոցի փական 1/2″ վերևի	հատ	35	2.00	70.00
14	Ջեռուցման մարտկոցի փական 1/2″ ներքևի	հատ	35	2.00	70.00
15	Պոլիպրոպիլենե խողովակների ձևավոր մասեր Φ20	հատ	74	0.50	37.00
16	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում PPR Φ20x2,8 PN20 փորձարկումով	մ	120.0	1.50	180.00

17	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում PPR Φ25x3,5 PN20 փորձարկումով	մ	220.0	1.90	418.00
18	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում PPR Φ32x4,4 PN20 փորձարկումով	մ	28.0	2.80	78.40
19	Խողովակների ամրակապիչներ 20-50մմ	հատ	400	0.20	80.00
20	Պոլիպրոպիլենե խողովակների ձևավոր մասեր Φ20-32	հատ	432	0.30	129.60
21	Անցքերի բացում ծածկերում, միջորմներում և պատերում 150x150	տեղ	72	1.00	72.00
22	Անցքերի փակում	մ3	0.042	100.00	4.20
23	Խողովակի փորձարկում	մ	368.0	0.18	66.24
	Ընդամենը				**4878.1**
	5. Օդափոխություն և օդորակում				
	Օդափոխություն				
1	Սանհանգույցի առասաղային օդամուղ Φ150 200մ3/ժամ P=70ՊԱ փորձարկում, կարգաբերումով	հատ	1	25.00	25.00
2	Սանհանգույցի առասաղային օդամուղ Φ125 100մ3/ժամ P=50ՊԱ փորձարկում, կարգաբերումով	հատ	4	15.00	60.00
3	Ճկուն օդատար Φ150	մ	4.0	4.00	16.00
4	Ճկուն օդատար Φ125	մ	28.0	3.00	84.00
5	Գլխանոց Φ125	հատ	4	28.00	112.00
6	Գլխանոց Φ150	հատ	1	35.00	35.00
7	Մոնտաժման նյութեր	կգ	5.0	1.00	5.00
8	Անցքերի բացում ծածկերում, միջորմներում և պատերում 150x150	տեղ	8	2.00	16.00
9	Անցքերի փակում	մ3	0.038	100.00	3.80
	Օդորակում				
1	Պղնձե խողովակների d=6,35 մոնտաժում փորձարկումով	մ	6.0	4.00	24.00
2	Պղնձե խողովակների d=12,7 մոնտաժում փորձարկումով	մ	6.0	5.00	30.00
3	Մալուխ 5x1,5մմ²	մ	8.0	0.80	6.40
4	Մոնտաժման նյութեր	կգ	10.0	1.00	10.00
5	Անցքերի բացում պատերում 150x150	տեղ	2	2.00	4.00
6	Անցքերի փակում	մ3	0.020	100.00	2.00
	Ընդամենը				**433.2**
	6. Էլեկտրականություն				

1	Բաշխիչ վահանակ 24 մոդուլի	լրակ.	1	35.00	35.00
2	Բաշխիչ վահանակ 36 մոդուլի	լրակ.	1	45.00	45.00
3	Ավտոմատ անջատիչ 1x10	հատ	5	3.00	15.00
4	Ավտոմատ անջատիչ 1x16	հատ	12	3.50	42.00
5	Ավտոմատ անջատիչ 1x25	հատ	24	4.00	96.00
6	ԲՎ 30ՄԱ պաշտպանիչ անջատման սարքավորում 1x25Ա	հատ	4	8.00	32.00
7	Ավտոմատ անջատիչ 1x50	հատ	1	7.00	7.00
8	Ավտոմատ անջատիչ 1x63	հատ	1	8.00	8.00
9	Ավտոմատ անջատիչ 1x80	հատ	1	10.00	10.00
10	Իմպուլսային գերլարումից պաշտպանիչ սարք	հատ	1	40.00	40.00
11	Մեկուսիչ ժապավեն	հատ	50	2.00	100.00
12	Պոլիվինիլքլորիդե խողովակ Φ20մմ	մ	1000.0	0.30	300.00
13	Պոլիվինիլքլորիդե ճկախողովակ Φ20մմ	մ	800.0	0.20	160.00
14	PVC խողովակի ամրակ Φ20մմ	հատ	3000	0.05	150.00
15	PVC խողովակի անկյունակ Φ20մմ	հատ	250	0.30	75.00
16	PVC խողովակ Φ50	մ	15.0	1.00	15.00
17	80x80x75մմ PVC խողովակի միացման տուփ	հատ	300	0.50	150.00
18	160x110x75մմ PVC խողովակի միացման տուփ	հատ	80	1.00	80.00
19	Պողպատ գոտի 60x5 հողանցման գոտի	մ	1.0	3.00	3.00
20	Պողպատ գոտի 40x4 հողանցման գոտի	մ	40.0	2.50	100.00
21	Մետաղյա անկյունակ 70x70x5 ցինկապատ պողպատից	հատ	8	12.00	96.00
22	Φ16 AIII ամրան 2հատ L=1500մմ	կգ	37.9	1.00	37.92
23	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 3x1,5մմ² ВВГ-LS	մ	400.0	0.50	200.00
24	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 3x2,5մմ² ВВГ-LS	մ	500.0	0.60	300.00
25	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 3x4մմ² ВВГ-LS	մ	850.0	0.70	595.00
26	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 3x16մմ² ВВГ-LS	մ	15.0	5.00	75.00
27	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 3x35մմ² ВВГ-LS	մ	15.0	25.00	375.00

28	16մմ² հաղորդալարի ծայրակալ	հատ	10	2.00	20.00
29	35մմ² հաղորդալարի ծայրակալ	հատ	10	4.00	40.00
30	Տուփ անջատիչների և վարդակների տեղադրման համար	հատ	126	0.60	75.60
31	Մեկդիքային շրջանակ վարդակների և անջատիչների համար	հատ	75	1.00	75.00
32	Երկդիքային շրջանակ վարդակների և անջատիչների համար	հատ	25	1.00	25.00
33	Չորսդիքային շրջանակ վարդակների և անջատիչների համար	հատ	26	2.00	52.00
34	16Ա բաժանիչ տուփով մեկդիրքային վարդակ	հատ	157	2.00	314.00
35	16Ա բաժանիչ տուփով մեկդիրքային վարդակ IP տարբերակի	հատ	6	2.00	12.00
36	16Ա բաժանիչ տուփով մեկդիրքային անջատիչ	հատ	26	2.00	52.00
37	16Ա բաժանիչ տուփով երկդիրքային անջատիչ	հատ	6	2.00	12.00
38	16Ա բաժանիչ տուփով մեկդիրքային ռևերս անջատիչ	հատ	6	3.00	18.00
39	RJ45 ինվենտորային վարդակ	հատ	26	3.00	78.00
40	A1 տիպի կետային լուսավորության սարք IP44	հատ	22	17.00	374.00
41	Լուսավորության սարք PIR տվիչով IP45 տիպի	հատ	4	13.00	52.00
42	Լուսավորության սարք 600x600մմ -40Վտ	հատ	53	10.00	530.00
43	Լուսավորության սարք 1200x800մմ LED տիպի -36Վտ	հատ	1	9.00	9.00
44	Լուսավորության սարք PIR տվիչով	հատ	2	12.00	24.00
45	Վթարային մարտկոցով համալրված լուսավորության սարք	հատ	4	18.00	72.00
46	Վթարային մարտկոցով համալրված առաստաղի լուսավորության սարք	հատ	4	17.50	70.00
	Ընդամենը				**5046.5**
	7. Հակահրդեհային համակարգ				
1	Ծխի դետեկտոր	հատ	42	7.00	291.20
2	Ձեռքի գործարկվող կանչ	հատ	5	6.00	30.00
3	Շչակ և ստրոբ բարձրախոս	հատ	6	8.00	48.00
4	Ձայնային ինտերֆեյս սարքավորում	հատ	1	9.00	9.00

5	Աին տիպի մոդուլ	հատ	1	250.00	250.00
6	Հակահրդեհային ազդանշանային համակարգի վահանակ	լրակ.	1	70.80	70.80
7	Վերահսկող համակարգիչ	լրակ.	1	165.00	165.00
8	ՀՀ ազդանծանային վահանակ ընդունարանում	լրակ.	1	108.00	108.00
9	Մալուխ 2x0,8 FRLS	մ	400.0	0.50	200.00
10	Պոլիվինիլքլորիդե ճկախողովակ Φ20մմ	մ	400.0	0.20	80.00
11	PVC խողովակի ամրակ Φ20մմ	հատ	500	0.20	100.00
12	Անվտանգության համակարգ ներառյալ ինտրնետային և հեռախոսային կապը	լրակ.	1	888.11	888.11
	Ընդամենը				**2240.11**
	Ընդամենը				**50700.000**
	ԱԱՀ 20%				**10140.000**
	Ընդամենը ԱԱՀ - 20%-ով				**60840.000**

** Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Արմավիր, Չարենցի փողոց 24 հասցեում:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011019776
ՀՎՀՀ 02631263
Գլխավոր քարտուղար՝ Ա. Նիկոյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Խլղաթյան Շին» ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ ք. Արմավիր,
Թումանյան փ. 82
< ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ> ՓԲԸ
Արմավիր մ/ճ
Հ/Հ 220033332226000
ՀՎՀՀ 04422512
Տնօրեն՝ Մ. Խլղաթյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1.1
« 20 » 01 2022թ. կնքված
ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ -ԱՄՇ-22/1.1 ծածկագրով պայմանագրի

ՆԿԱՐԱԳԻՐ
սարքերի և սարքավորումների

Չափաբաժնի համար	Առաջարկվող սարքերի և սարքավորումների					
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը	երաշխիքային ժամկետները
1	Գազի կաթսա	տուրբո գազի կաթսա 35ԿՎտ	35ԿՎտ	Ռուսաստան Չինաստան	տուրբո գազի կաթսա 35ԿՎտ	3տարի
1	Գազի կաթսա	տուրբո գազի կաթսա 28ԿՎտ	28ԿՎտ	Ռուսաստան Չինաստան	տուրբո գազի կաթսա 28ԿՎտ	3տարի
1	առաստաղային օդամուղ	առաստաղային օդամուղ Φ150 200մ3/ժամ P=70ՊԱ փորձարկում, կարգաբերումով	200մ3/ժամ P=70ՊԱ	Չինաստան, Ռուսաստան	Φ150 200մ3/ժամ P=70ՊԱ	3տարի
1	առաստաղային օդամուղ	առաստաղային օդամուղ Φ125 100մ3/ժամ P=50ՊԱ փորձարկում, կարգաբերումով	100մ3/ժամ P=50ՊԱ	Չինաստան, Ռուսաստան	Φ125 100մ3/ժամ P=50ՊԱ	3տարի
1	«Սթրաժ Դիմ»	Ծխի դետեկտոր	"Страж дым VIP 909H"	Ռուսաստան	Ծխի դետեկտոր	3տարի
1	Բաշխիչ վահանակ	Բաշխիչ վահանակ 24 մոդուլի	IEK	Ռուսաստան	24 մոդուլի	3տարի
1	Բաշխիչ վահանակ	Բաշխիչ վահանակ 36 մոդուլի	IEK	Ռուսաստան	36 մոդուլի	3տարի
1	Լեգրանտ	Ավտոմատ անջատիչ 1x10	Rx3 C 10A 1P	Չինաստան	4.5 կԱ, 1մոդուլային, 10000էլեկտրական և 20000 մեխանիկական գործարկում	1տարի
1	Լեգրանտ	Ավտոմատ անջատիչ 1x16	Rx3 C 16A 1P	Չինաստան	4.5 կԱ, 1մոդուլային, 10000էլեկտրական և 20000 մեխանիկական գործարկում	1տարի
1	Լեգրանտ	Ավտոմատ անջատիչ 1x25	Rx3 C 25A 1P	Չինաստան	4.5 կԱ, 1մոդուլային, 10000էլեկտրական և 20000 մեխանիկական գործարկում	1տարի
1	Լեգրանտ	Ավտոմատ անջատիչ 1x50	Rx3 C 50A 1P	Չինաստան	4.5 կԱ, 1մոդուլային, 10000էլեկտրական և 20000 մեխանիկական գործարկում	1տարի
1	Լեգրանտ	Ավտոմատ անջատիչ 1x63	Rx3 C 63A 1P	Չինաստան	4.5 կԱ, 1մոդուլային, 10000էլեկտրական և 20000 մեխանիկական գործարկում	1տարի

1	Լեգրանտ	Ավտոմատ անջատիչ 1x80	Rx3 C 80A 1P	Չինաստան	4.5 կԱ, 1մոդուլային, 10000էլեկտրական և 20000 մեխանիկական գործարկում	1տարի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011019776
ՀՎՀՀ 02631263
Գլխավոր քարտուղար՝ Ա. Նիկոյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Խլղաթյան Շին» ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ ք. Արմավիր,
Թումանյան փ. 82
< ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ> ՓԲԸ
Արմավիր մ/ճ
Հ/Հ 220033332226000
ՀՎՀՀ 04422512
Տնօրեն՝ Մ. Խլղաթյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 20 » 01 2022թ. կնքված
ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ -ԱՄՇ-22/1.1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՐՄԱՎԻՐԻ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	1. Շինարարական աշխատանքներ Քանդման աշխատանքներ	*Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*	20.09.2022թ
2	2. Ներքին սառը տաք ջրամատակարարում		
3	3. Կենցաղային կոյուղի		
4	4. Ջեռուցում		
5	5. Օդափոխություն և օդորակում		
6	6. Էլեկտրականություն		
7	7. Հակահրդեհային համակարգ		
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011019776
ՀՎՀՀ 02631263
Գլխավոր քարտուղար՝ Ա. Նիկոյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Խլղաթյան Շին» ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ ք. Արմավիր,
Թումանյան փ. 82
< ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ> ՓԲԸ
Արմավիր մ/ճ
Հ/Հ 220033332226000
ՀՎՀՀ 04422512
Տնօրեն՝ Մ. Խլղաթյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«20» 01 2022թ. կնքված
ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ -ԱՄՇ-22/1.1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45611300/501	այլ շենքերի, շինությունների հիմնանորոգում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011019776
ՀՎՀՀ 02631263
Գլխավոր քարտուղար՝ Ա. Նիկոյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Խլղաթյան Շին» ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ ք. Արմավիր,
Թումանյան փ. 82
< ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ> ՓԲԸ
Արմավիր մ/ճ
Հ/Հ 220033332226000
ՀՎՀՀ 04422512
Տնօրեն՝ Մ. Խլղաթյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 4
« 20 » 01 2022թ. կնքված
ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ -ԱՄՇ-22/1.1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 20 » 01 2022թ. կնքված
ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ -ԱՄՇ-22/1.1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն